

# GENOCIDE CENTENNIAL: ADDRESSING IMPLICATIONS

*Posted on February 9, 2015 by Keghart*



Category: [Opinions](#)



**Mira Yardemian**, Public Relations Director, Haigazian University, Beirut, 4 February 2015

To access the Armenian text click [here](#).

On the occasion of the centennial commemoration of the Armenian Genocide, and under the high patronage of the President of the Union of the Armenian Evangelical Churches in the Near East, Rev. Mgrdich Karageozian, a conference titled "Armenian Genocide Centennial: Addressing the Implications" was organized by Haigazian University and the Armenian Genocide 100<sup>th</sup> Anniversary Commemoration Lebanon Committee, from January 31 to February 1, 2015.



The auspicious opening, which was attended by ministers, members of parliament, officials, religious leaders, and academicians, featured guest speaker, prominent scholar and historian, Prof. Masoud Daher from the Lebanese University, on the topic of "the Armenian Question in the Age of Globalization: the Current Situation and its Prospects".

**Mira Yardemian**, Public Relations Director, Haigazian University, Beirut, 4 February 2015

To access the Armenian text click [here](#).

On the occasion of the centennial commemoration of the Armenian Genocide, and under the high patronage of the President of the Union of the Armenian Evangelical Churches in the Near East, Rev. Mgrdich Karageozian, a conference titled "Armenian Genocide Centennial: Addressing the Implications" was organized by Haigazian University and the Armenian Genocide 100<sup>th</sup> Anniversary Commemoration Lebanon Committee, from January 31 to February 1, 2015.



The auspicious opening, which was attended by ministers, members of parliament, officials, religious leaders, and academicians, featured guest speaker, prominent scholar and historian, Prof. Masoud Daher from the Lebanese University, on the topic of "the Armenian Question in the Age of Globalization: the Current Situation and its Prospects".

The conference also witnessed parallel events: a worship service in the First Armenian Evangelical Church, with a special message by Haigazian University President, Rev. Paul Haidostian, in addition to two Arabic book launches and presentations, "100 years of the Armenian Genocide: 100 Testimonials", by author Dr. Nora Arisian, and "Karabagh Dailies, Green and Black: no War no Peace", by author Tatul Hakobyan.

The conference convened four sessions on two consecutive days, covering eight topics, presented by eight scholars coming from Armenia, Turkey, Syria and Lebanon.

Panelists were Dr. Suren Manukyan on "*The Demographic, Cultural, Psychological, Geographic,*

*Economic, Psychological and Political Consequences of the Armenian Genocide*", Dr. Vladimir Vardanyan on "Responsibility for the Armenian Genocide: International Legal Obligations of the Ottoman Empire Concerning its Armenian Population", Dr. Zaven Messerlian on "the Reaction of the International Community during and after the Armenian Genocide", Dr. Saleh Zahreddine on "the Blackmailing of Turkey by the Great Powers Regarding the Armenian Genocide", Prof. Arsen Avagyan on "the Relations of Turkey and the Republic of Armenian (1991-2014)", Mr. Tatul Hagopyan on "the Relations of Turkish-Armenian non-state Actors", Dr. Bulent Bilmez on "the Position of the Turkish State vis-à-vis its Minorities (1923-2014)", Dr. Hranush Karadian on "the Status of the Armenians in Contemporary Turkey: the Case of the Converted Armenians."

Presentations and sessions were moderated by Dr. Antranig Dakessian and Mrs. Seta Khedeshian.

**Հարիւրամեակ Հայոց Ցեղասպանութեան.  
Հետեւանքներ եւ Յառաջադրանքներ  
Երկօրեայ Գիտաժողով Հայկազեան Համալսարանին Մէջ**



Հովանաւորութեամբ Մերձաւոր Արեւելքի Հայ Աւետարանական Եկեղեցիներու Միութեան Նախագահ Վեր. Մկրտիչ Գարակեօզեանի, եւ կազմակերպութեամբ Հայոց Ցեղասպանութեան Հարիւրամեակի Լիբանանի Կեդրոնական Մարմինին ու Հայկազեան Համալսարանին, Շաբաթ, 31 Յունուար եւ Կիրակի 1 Փետրուար 2015ին տեղի ունեցաւ «Հարիւրամեակ Հայոց Ցեղասպանութեան. Հետեւանքներ եւ Յառաջադրանքներ» վերնագրեալ երկօրեայ գիտաժողովը, Հայկազեան Համալսարանին մէջ:

Գիտաժողովին պաշտօնական բացումը տեղի ունեցաւ Շաբաթ օր, կեսօրէ ետք ժամը 4ին, Հայ Աւետարանական Առաջին Եկեղեցիին ներքնայարկը:

Ներկայութեամբ Լիբանանի մէջ Հայաստանի Հանրապետութեան արտակարգ եւ լիազօր դեսպան Աշոտ Քոչարեանի, Սուրիոյ եւ Լիբանանի Աւետարանական Համայնքներու Նախագահ Վեր. Սելիմ Սահիւնիի, նախկին զօրավար Միշէլ Աունի ներկայացուցիչ Վեր. Էտկար Թրապուլսիի, Ուժանիւթի Նախարար Արթիւր Նազարեանի, Պետական Երեսփոխան Ժան Օղասապեանի, նախկին նախարարներու եւ երեսփոխաններու, Պուրճ Համուտի քաղաքապետին, լիբանահայ կուսակցութիւններու եւ միութիւններու ներկայացուցիչներու, կրթական եւ մշակութային անձնաւորութիւններու, ինչպէս նաեւ հայ եւ օտար մտաւորական խաւի մը ու հիւրերու, Հայկազեան Համալսարանի Նախագահ Վեր.-Դոկտ. Փօլ Հայտօսթեան բարիգալուստ մաղթեց ներկաներուն: Ան իր խօսքին մէջ լուսարձակի տակ առաւ նահատակի գաղափարը, ընդգծելով որ Հայկազեան Համալսարանը ապրող օրինակ է այդպիսի նահատակութեան, որովհետեւ նոյնինքն՝ Վեր.-Դոկտ. Արմենակ Հայկազեանը, որուն անունով կոչուած է այս համալսարանը, նահատակ մըն է Ցեղասպանութեան:

Հայոց Ցեղասպանութեան Հարիւրամեակի Լիբանանի Կեդրոնական Մարմինին անունով խօսք

առնելով, Շահան Գանտահարեան ըսաւ, թէ պատահական չէ, որ Հայոց Ցեղասպանութեան 100ամեակին նուիրուած ձեռնարկներուն շարքին առաջինը տեղի կ'ունենայ Հայկազեան Համալսարանի միջավայրին մէջ, ինչ որ կը պայմանաւորուի նշեալ վայրին համասփիւռքեան մակարդակի վրայ ակադեմական իւրայատուկ միջաջավայրի հանգամանքով: Ան նկատել տուաւ, որ գիտաժողովով սկսիլը կը նախանշէ այն հիմնական շեշտադրումներն ու առանցքները, որոնք պիտի յատկանշեն Լիբանանի մէջ տեղի ունենալիք ձեռնարկներուն յետագայ աշխատանքները:

Դոկտ. Անդրանիկ Տագետեան ներկայացուց Լիբանանեան Համալսարանի երկարամեայ դասախօս, Ընկերային եւ Մարդասիրական Բաժանմունքի Դոկտորականի Բաժնի պատասխանատու Փրոֆ. Մասուուտ Տահերը, որ հեղինակութիւն է լիբանանեան գիտական շրջանակներուն մէջ:

«Հայկական Հարցը Համաշխարհայնացումի Դարաշրջանին. Ներկան եւ Հեռանկարները» վերնագրով իր դասախօսութեան մէջ, Փրոֆ. Տահեր, համառօտակի պատմական անդրադարձ մը կատարեց հայ-թրքական փոխյարաբերութեանց՝ նախատեղեմեան շրջանին: Ապա, շեշտելով 1915ին հայոց դէմ թուրքերուն կողմէ գործուած Ցեղասպանութիւնը, ան այս Ցեղասպանութիւնը նկատեց քսաներորդ դարասկիզբի ամենամօթալի ոճիրներէն մին, պնդելով որ անոր ճշմարտացիութիւնը հաստատուած է թիւերով, փաստաթուղթերով եւ վկայութիւններով:

Ապա ան ներկայացնելէ ետք լայն գիծերը ժամանակակից համաշխարհային գործընթացներուն, անդրադարձաւ համաշխարհային եւ շրջանային տնտեսական, մշակութային եւ քաղաքական զարգացումներուն եւ ստուերագծեց Հայկական Հարցի լուծման հեռանկարները եւ ուղիները:

Փրոֆ. Տահեր կարելորեց համայն հայութեան աճող ճիգը՝ ամենուրեք կենդանի պահելու Հայկական Հարցը՝ բազմատեսակ ձեռնարկներով եւ միջոցառումներով, կառչած մնալու իրենց պահանջատիրութեան եւ պահպանելու իրենց ինքնութիւնը: Ան ընդգծեց որ այս յանձնառութիւնները կը միտին բարձրաձայնել արդար դատը՝ աշխարհի բարձրագոյն ամբիոններէն եւ որոշմանու կեդրոններէն, որով թափ առնէ ճնշումը Թուրքիոյ վրայ՝ ճանչնալու Ցեղասպանութիւնը: Ան նշեց որ ամբողջ աշխարհի մէջ՝ Սփիւռքի, Հայաստանի Հանրապետութեան թէ Թուրքիոյ, հայութիւնը կողմակից է Հայկական Հարցի խաղաղ լուծման՝ Թուրքիոյ հետ բնականոն յարաբերութեանց հաստատման՝ Ցեղասպանութեան ճանաչումով եւ վնասներու համակարգեալ հատուցումով ու հայոց աշխարհագրական, կրօնական, պատմական եւ մշակութային խորհրդանշաններու վերադարձումով:

Հուսկ, ան իր խօսքը փակեց հաւաստելով որ ապագան ա՛յն վճռակամ ժողովուրդներուն է, որոնք կը կառչին իրենց ինքնորոշման իրաւունքին՝ որքան ալ երկարի ժամանակը, եւ հարցադրեց «արդե՞օք հայկական հարցը իր արդար լուծումը կը գտնէ եթէ աշխարհը յաջողի պահպանել ժողովրդավարութեան առկայ մնացորդացը եւ անելի մարդկայնական համաշխարհայնացումի մը անցնի»:

Պաշտօնական բացումը իր անարտին հասաւ Վեր. Գարակեօզեանի փակման խօսքով: Ան յայտնեց, որ իբրեւ Հայոց Ցեղասպանութեան ականատեսի զաւակներ՝ Ցեղասպանութեան փաստեր հաւաքելով չէ որ պիտի զբաղինք, այլ մեր գիտական աշխատանքը պէտք է ծանրանայ հատուցման

Եւ արդար իրաւունքի պահանջքին վրայ: Վեր. Գարակեօզեան շեշտեց, որ քաղաքականութիւններ փոփոխութեան կ'ենթարկուին, պետութիւններ կու գան ու կ'անհետանան, քարտէսներ կը փոխուին, բայց արդարութիւնն ու ճշմարտութիւնը կը մնան անխախտ:

Կարճատեւ դադարէ մը ետք, սկիզբ առաւ գիտաժողովին առաջին նիստը, որ յատկացուած էր Ցեղասպանութեան հետեւանքներուն եւ անոնց վերացման միջազգային օրէնքի ուղիներուն:

Նիստին առաջին զեկոցող, Դոկտ. Սուրէն Մանուկեան (Փոխտնօրէնը ՀՀ ԳԱԱ Հայոց Ցեղասպանութեան Թանգարան-Ինստիտուտի) զեկուցեց «Հայոց Ցեղասպանութեան Ժողովրդագրական, Մշակութային, Հոգեբանական, Աշխարհագրական, Տնտեսական եւ Քաղաքական Հետեւանքները» նիւթին շուրջ:

Դոկտ. Մանուկեան նշեց, որ «Ցեղասպանութիւնը ամբողջ մարդկութեան դէմ գործուած ոճիր է, սակայն անմիջական, բուն թիրախը խիստ որոշակի ազգային, էթնիք, ցեղային կամ կրօնական խումբ է,- եւ թէ՛- Հայոց Ցեղասպանութեան բոլոր՝ հետեւանքները պետք է դիտարկել իբրեւ մէկ ամբողջութիւն»: Ան ընդգծեց, որ հայութեան կորուստները ճակատագրական էին եւ կրնային - շարք մը այլ ազգերու եւ էթնոսներու պարագային - ոչնչացնող ըլլալ, եւ թէ՛ Հայոց Ցեղասպանութեան հետեւանքներու գնահատումը մարդկային եւ սիւնական կորուստներու պարզ հանրագումար չի կրնար ըլլալ ու թերի է խօսիլ միայն զոհերու թիւերու մասին: Ան ակեցուց, որ շատ պարագաներու մէջ հետեւանքները երկարաժամկետ կորուստներ են եւ ակելի ուշ կը բացայայտուին: Ան մատնանշեց, որ հայութեան ժողովրդագրական կառուցուածքին մէջ որակական փոփոխութիւններ յառաջացան եւ ձեւաւորուեցաւ ազգ մը, որուն մեծամասնութիւնը իր հայրենիքէն դուրս կ'ապրի, ասկէ բխող բոլոր հետեւանքներով:

Անդրադառնալով աշխարհագրական կորուստներուն, Դոկտ. Մանուկեան շեշտադրեց Արեւմտեան Հայաստանի հայազրկումը, որ կը բերէ ոչ միայն մշակութային ոչնչացում, այլեւ ժողովուրդը իր միջավայրէն կտրուելու պատճառով կը յառաջացնէ ստեղծագործական ընթացքի ընդհատում:

Երկրորդ եւ օրուան վերջին զեկուցողն էր Հայաստանի Հանրապետութեան Սահմանադրական Դատարանի անձնակազմէն Դոկտ. Վլադիմիր Վարդանեան: «Հայոց Ցեղասպանութեան Պատասխանատուութիւնը. Օսմանեան Կայսրութեան Միջազգային Իրաւական Յանձնառութիւնները Իր Հայ Բնակչութեան Հանդէպ» զեկոյցին մէջ, Դոկտ. Վարդանեան ներկայացուց ՄԱԿի Մարդկային Իրաւանց ու Ցեղասպանութեան հռչակագիրներուն կողքին առկայ միջազգային այլ փաստաթուղթերու գոյութիւնը եւ անոնց օգտագործումը՝ Միջազգային Օրէնքի ճամփով: Ան ելակետ ընդունելով Թուրքիոյ Հանրապետութեան՝ Օսմանեան Կայսրութեան իրաւայաջորդ ըլլալու փաստը, լուսարձակի տակ առաւ Օսմանեան Կայսրութեան միջազգային իրաւական պարտաւորութիւնները՝ հայոց հանդէպ: Այս առումով, քննութեան նիւթ դարձան 1878ի Պերլինի Վեհաժողովի եւ շարք մը նման այլ միջազգային յանձնառութիւններու եւ պարտաւորութիւններու իրաւաթուղթեր:

Համապարփակ, լուսաբանող եւ խոստմնալից հեռանկարներու հնարաւորութիւն բացող ճամփու մը արահետը կարծէք թէ գծուեցաւ, որ Էական է զարգացնել, մանաւանդ որ այս ուղին շահեկան եւ

կարեւոր նորութիւններ եւ հնարաւորութիւններ կ'ընծայէ Հայկական Հարցին միջազգային իրաւական երթին:

Շուրջ հարիւր մասնակիցներու երկար քննարկումներէ, լուսաբանութիւններէ ու արծարծումներէ ետք փակուեցաւ առաջին նիստը եւ գիտաժողովին առաջին օրը, երեկոյեան ժամը 7.30ին:

Գիտաժողովին երկրորդ օրը սկսաւ ժամը տասին, Հայ ԱԼԵտ. Ա. Եկեղեցիին մէջ տեղի ունեցած պաշտամունքով, ուր պատգամեց՝ Վեր. Դոկտ. Փօլ Հայտօսթեան, նիւթ ունենալով Մատթեոսի ԱԼԵտարանէն, ուր Յիսուս կը խօսի վախի մասին: Վեր. Հայտօսթեան մեջբերեց՝ «Մի՛ վախնաք որ ճշմարտութիւնը կորսուի» հատուածը, ու թելադրեց պարտականութիւն ստանձնել ճշմարտութեան առաքելներ ըլլալով պատմելու եւ խօսելու ճշմարտութեան մասին: Ապա ան մեջբերեց «Մի՛ վախնաք անոնցմէ որ մարմինը կը սպաննեն» հատուածը, ու ընդգծեց որ պետք չէ բաւարարուիլ հայկական մարմին ունենալով, այլ պետք է հայկական հոգին կանգուն եւ արթուն պահել, որպէսզի ան նպատակ եւ առաքելութիւն տայ մեր կեանքին: Հոսկ, ան յառաջադրեց որ իբրեւ քրիստոնեայ հայ ժողովուրդ, մենք պետք է միշտ փնտռենք Աստուծոյ ընկերակցութեան արժէքը մեր կեանքին ու գործունեութեան մէջ:

Ժամը 11.30ին սկսաւ գիտաժողովին Բ. նիստը՝ որ վերնագրուած էր «Միջազգային Ընտանիքին Հակազդը՝ Տեղասպանութեան եւ Անոր Շահագործումը՝ Պետութիւններու Կողմէ»:

Լիբանահայ ականաւոր պատմաբան, ակադեմիկոս Դոկտ. Չաւեն Մսրըլեան զեկուցեց «Միջազգային Համայնքին Հակազդը՝ Հայոց Տեղասպանութեան Ընթացքին եւ Անկէ Ետք» նիւթին շուրջ, այդ հակազդը դնելով պատմութեան խորապատկերին վրայ:

Դոկտ. Մսրըլեան, հաւաստեց, որ թուրք պետական ղեկավար շրջանակներու մէջ հայոց նկատմամբ ցեղասպանական միտումները գոյ էին Պերլինի Վեհաժողովէն ետք եւ փաստարկեց, որ Թուրքիոյ ղեկավար խմբակը շատ լաւ կը գիտակցեր թէ տեղահանութիւն հրահանգելով ազգի մը ցեղասպանումին վճիռը կ'արձակէր: Ապա ան անդրադարձաւ 1915 Մայիսի սկիզբին Ամենայն Հայոց Կաթողիկոս Գեորգ Ե.ի դիմումին՝ մեծ պետութեանց, կեցնելու հայոց ջարդերը:

Դոկտ. Մսրըլեան կարեւորեց այդ դիմումին ի պատասխան, 22 Մայիս 1915ին Դաշնակից Պետութիւններու ազդարարութիւնը՝ թուրք ղեկավարներուն, թէ՛ մարդկութեան դէմ ոճիրներու համար անձնապէս պատասխանատու պիտի ըլլան: Ան մատնանշեց որ այս փաստաթուղթը օգտագործուեցաւ Համաշխարհային Բ. Պատերազմէն ետք որպէս նախընթաց՝ դատելու համար նացի եւ ճափոնցի պատերազմական ոճրագործները եւ հիմք կազմեց Նիւրնբերկի ու Թոքիոյի հրովարտակներուն:

Ան անդրադարձաւ Հռոմի Բենեդիկտոս ԺԵ. Պապին եւ Մեքքէի Շերիֆ Հիւսէյնի նամակներուն, ինչպէս նաեւ չէզոք եւ պատերազմիկ երկիրներու մեծերու յայտարարութիւններուն, որոնցմով կը յստականար թէ անոնք կը գիտակցէին թէ կատարուածը ազգի մը բնաջնջումն է: Դոկտ. Մսրըլեան բացատրեց որ Դաշնակից երկիրներու ղեկավարներ խոստումներ ըրին հայոց, բայց չգործադրեցին: Ընդհակառակը, Հայաստանի Ա. Հանրապետութեան ճգնաժամին անոնք ոչ միայն օգնութեան չհասան, այլեւ փորձեցին զայն շահագործել: Ան նշեց նաեւ որ Օսմանեան պետութեան յետ-

պատերազմական սկզբնական կեցուածքը նոյնպէ (քննութիւն, դատ, մամուլի մէջ բացայայտումներ) շրջադարձ ունեցաւ քեմալականներու իշխանութեան գալով:



Հուսկ, Դոկտ. Մսըրլեան եզրափակեց որ միջազգային օրէնքի հիմամբ պետք է հետապնդել հողային, նիւթական եւ բարոյական հատուցման հարցը՝ օգտագործելով ազգի մը հողին տիրելու համար ազգի մը բնաջնջումը ծրագրելու եւ գործադրելու փաստը:

Նիստին երկրորդ զեկուցաբերն էր լիբանանցի ծանօթ պատմաբան, Դոկտ. Սալէի Չահրետտին, որ ներկայացուց «Հայոց Ցեղասպանութեան Չարաշահումը Պետութիւններու Կողմէ՝ Թուրքիոյ Դեմ» նիւթը:

Դոկտ. Չահրետտին հաստատեց որ Արեւելեան Հարցը իր աւարտը չունեցաւ Թուրքիոյ Հանրապետութեան հռչակումով: Ընդհակառակը, անիկա մասնատուեցաւ ենթահարցերու, որոնք նոր ձեւ եւ տարողութիւն ստացան ու գոյատեւեցին տարբեր ազդեցիկութեամբ: Ան լուսարձակի տակ առաւ Հայոց Ցեղասպանութեան չարաշահումը՝ շրջանային թէ մեծ պետութիւններու կողմէ, որոնք զայն կ'օգտագործեն իբրեւ ճնշամիջոց՝ Թուրքիոյ դեմ: Ան վերլուծեց ճնշամիջոցի այս քաղաքականութեան վերածեալութիւնը՝ Պաղ Պատերազմի աւարտէն, Ծոցի երկրորդ Պատերազմէն, Պերլինի պատի փլուզումէն եւ Գերմանիոյ միացումէն ետք, ծանրանալով անոր քաղաքական, տնտեսական, զինուորական եւ դիւանագիտական դրսեւորումներուն վրայ:

Դոկտ. Չահրետտին վերլուծեց Միացեալ Նահանգներու, Ռուսիոյ, Ֆրանսայի, Գերմանիոյ եւ Յունաստանի չարաշահումի այս քաղաքականութիւնը, ներկայացնելով իւրաքանչիւր երկրի առանձին դրսեւորումներու օրինակներ՝ թէ՛ ներթրքական եւ թէ՛ միջպետական յարաբերութիւններու եւ շփումներու ծիրին մէջ: Ան անդրադարձաւ նաեւ Թուրքիոյ՝ Եւրոպական Միութեան միանալու ինդրով վերջինիս վարած երկակի քաղաքականութեան մանրամասնութիւններուն, ինչպէս նաեւ քիւրտերու քաղաքականութեան՝ Հայոց Ցեղասպանութեան ճանաչման առնչութեամբ: Դոկտ. Չահրետտին եզրակացուց որ վերոյիշեալ քաղաքական միաւորներուն կողմէ որդեգրուած ճնշումի այս քաղաքականութիւնը հիմնուած է անոնց շահերուն վրայ, ուր Հայկական Ցեղասպանութեան հարցը իր տարբեր երեսակներով կ'օգտագործուի իբրեւ ճնշամիջոց՝ ուրիշ հարցերու կողքին:

Ծաւալուն քննարկումներէ ետք, երկրորդ նիստը փակուեցաւ եւ ներկաները անցան ճաշի դադարի:

Գիտաժողովին երրորդ նիստը նուիրուած էր Հայ Թրքական Յարաբերութիւններուն:

Առաջին զեկուցողն էր Հայաստանի Հանրապետութեան Արտաքին Գործոց Նախարարութեան կազմէն Փրոֆ. Արսէն Աւագեան, որ հանգամանալից ներկայացուց «Հայաստանի Հանրապետութիւն-Թուրքիա Յարաբերութիւնները 1991-2014» նիւթը:

Փրոֆ. Աւագեան ընդգծեց որ հաշուի առնելով պատմական անցեալի, հայերու հայրենազրկումի եւ Թուրքիոյ կողմէ անոնց գոյքին եւ ունեցուածքին տիրանալու, Մեծ Եղեռնէն ետք հայերու սփիւռքածին ազգ հանդիսանալու հանգամանքները՝ Հայաստան-Թուրքիա յարաբերութիւնները իրենց բնոյթով աւելի բարդ են եւ համակողմանի, քան սովորական երկու դրացի պետութիւններու միջեւ

**յարաբերութիւնները: Ան այդ յարաբերութիւնները պայմանականօրէն բաժնեց երեք փուլերու:**

1991Էն սկսեալ հայ-թրքական շփումները միջանկի փուլեր անցած են, որոնք չեն յանգեցուցած ինդիւրներու կարգաւորման եւ դիւանագիտական յարաբերութիւններու հաստատման: Ընդհակառակը՝ 1992ին, թրքական կողմի ընթացքով, անոնք թեւակոխած են Թուրքիոյ կողմէ Հայաստանի շրջափակումի, ճնշումի եւ Լեռնային Ղարաբաղի հակամարտութեան միջամտութեան փորձերու շրջան: Փրոֆ. Աւագեան բացատրեց, որ այս իրավիճակը որոշ, ոչ-Էական փոփոխութիւններով կը շարունակուի մինչեւ այսօր, աւելցնելով որ 1995Էն սկսեալ կարգաւորման փնտռողութիւններն ու նախաձեռնութիւնները շեշտաւորուեցան Թուրքիոյ մնայուն նախապայմաններով, որովհետեւ Թուրքիան հայ-թրքական յարաբերութիւններու կարգաւորումը կը կապեր հայ-ազրպէյճանական յարաբերութիւններու կարգաւորման:

Փրոֆ. Աւագեան վերլուծեց որ Թուրքիա՝ Հայոց Ցեղասպանութեան միջազգային ճանաչումը եւ անկէ բխող հետեւանքները կը նկատէ իր ազգային անվտանգութեան սպառնացող ինդիւր, ընդգծելով որ այդ առումով կարեւոր դեր ունի թրքական ազգային մտածելակերպին մէջ տեղ գրաւած «Սերի բարդոյթ»ը:

Եզրափակելով իր խօսքը, Փրոֆ. Աւագեան նշեց որ ներկայիս Թուրքիա կը վարէ Հայոց Ցեղասպանութեան միջազգային ճանաչումը խոչընդոտելու «խելացի ժխտողականութեան» քաղաքականութիւն, Հայաստանի Հանրապետութեան եւ Սփիւռքի գործունէութիւնը կը դիտարկէ իբրեւ միասնական եւ համակարգուած եւ հայութիւնը իր ազգային ապահովութեան վտանգ կը սեպէ ու ըստ այդմ կը մշակէ իր պայքարի մարտավարութիւնը:

Երրորդ նիստին երկրորդ զեկոյցով, Թաթուլ Յակոբեան ներկայացուց «Հայ-Թուրք Ոչ-Պետական Յարաբերութիւնները» նիւթը:

Մամուլի հանրածանօթ եւ վաստակաւոր գործիչ Թաթուլ Յակոբեան 1991Էն՝ Հայաստանի Հանրապետութեան անկախութենէն սկսեալ հայ-թրքական ոչ-պետական շփումները բաժնեց երեք պայմանական փուլերով՝ 1991-2001, 2001-2008 եւ 2008-2014:

Յակոբեան նշեց որ մինչեւ 2001 հայ-թրքական ոչ-պետական շփումները աշխուժ չեն եղած: Այդ շրջանի ամենէն յայտնի նախաձեռնութիւնը Թուրք-Հայկական Տնտեսական Չարգացման Խորհուրդն էր, որ ստեղծուեցաւ 1997ին: 2001ին ստեղծուեցաւ Թուրք-Հայկական Հաշտեցման Յանձնաժողովը, որ ամենէն երկարակեաց նախաձեռնութիւնը եղաւ: 2008ի «Ֆուլթալային դիւանագիտութիւն»ով, հայ-թրքական ոչ-պետական շփումները մտան նոր փուլ, որ կը շարունակուի մինչեւ այսօր:

Յարգելի փորձագետը անդրադարձաւ նաեւ այս շփումներուն նկատմամբ միջազգային, սփիւռքեան, հայաստանեան եւ թրքական արձագանգներուն, որոնք միանշանակ չեն եղած: Ան եզրափակեց իր զեկոյցը բացատրելով այդ շփումներուն թե՛ նպաստաւոր եւ օգտակար եւ թե՛ աննպաստ ու վտանգաւոր միտումները, աւելցնելով որ անոնց ապագան պայմանաւորուած է միջազգային կազմակերպութիւններու եւ առանձին երկիրներու դրամաշնորհներով:

Աշխուժ քննարկումէն ու սուրճի դադարէն ետք գիտաժողովը անցաւ իր վերջին նիստին, որ



վերնագրուած էր «Թուրքիոյ Հանրապետութիւնն ու Թուրքը՝ Յաջա Երկրին Փոքրամասնութիւններուն»:

Առաջին զեկոցողն էր Իսթանպուլի Պիլկի Համալսարանի պատմութեան ամբիոնի վարիչ Դոկտ. Պիլլենթ Պիլմեզ, որ ծաւալուն եւ լուսաբանական վերլուծութեամբ ներկայացուց Թուրքիոյ Հանրապետութեան քաղաքականութիւնը՝ երկրին ոչ-քրիստոնէայ փոքրամասնութիւններուն հանդէպ՝ 1923-2014 տասնամեակներուն:

Դոկտ. Պիլմեզ ընդգծեց, որ Թուրքիոյ մէջ «փոքրամասնութիւն» եզրը իրաւականօրէն կ'օգտագործուի միայն ոչ-իսլամ փոքրամասնութիւններուն, հակառակ անոր որ գոյութիւն ունին այլ կրօնական եւ էթնիք փոքրամասնութիւններ եւս, որոնք կարելոր դեր խաղացած են Թուրքիոյ պատմութեան մէջ:

Յարգելի բանախօսը լուսաբանեց այդ փոքրամասնութիւններուն՝ թուրք ազգի կերտումին մէջ դերն ու տեղը: Ան նշեց որ այդ դերը կը ծառայէր ձուլումի, ցեղային մաքրագործումի եւ կամ ոչնչացումի քաղաքականութեան, որուն սկիզբը կը հանդիսանար Հայոց 1915ի Ցեղասպանութիւնը:

Դոկտ. Պիլմեզ անդրադարձաւ թուրք ազգի մտայնութեան, հաւաստելով որ Թուրքիոյ պետական քաղաքականութիւնը խորապէս արմատաւորուած է ոչ միայն ժողովուրդներու, այլեւ ընդդիմադիր քաղաքացիական-մտաւորական շարժումներու դեմ Օսմանեան Պետութեան անհաւասար քաղաքականութեան մէջ եւ եզրակացուց որ Թուրքիոյ մէջ փոքրամասնութիւններուն հանդէպ քաղաքականութեան ժողովրդավարացումը խոչընդոտող գլխաւոր գործօն մըն է Թուրքիոյ իսլամ մեծամասնութեան մէջ տիրող egalophobia (հաւասարագորութեան վախ), որ կը ներկայացուի իսլամա-թուրքիստական ներկայ կառավարութեամբ:

Գիտաժողովին վերջին նիստին զեկուցեց հանրածանօթ ազգագրագէտ Դոկտ. Հրանուշ Խառատեան՝ «Հայերուն Կարգավիճակը Ժամանակակից Թուրքիոյ մէջ. Իսլամաց(ու)ած Հայերը» նիւթով:

Դոկտ. Խառատեան բացատրեց որ հայերը մասնաւոր պաշտօնական կարգավիճակ մը չունին Թուրքիոյ մէջ: Լոզանի Խորհրդաժողովի տրամադրութիւնները՝ Թուրքիոյ «ոչ-մահմետական փոքրամասնութիւններուն» խնդրով, կը պարտաւորեցնեն Թուրքիան որ անոնք ունենան իրենց համայնքային դպրոցները, ապահովութիւն՝ իրենց կրօնական հաստատութիւններուն շուրջ եւն.: Ան նշեց, սակայն, որ որ Ազգերու Լիկան իրաւունք չունէր վերահսկելու Թուրքիոյ ոչ-մահմետական փոքրամասնութիւններու իրաւունքներու գործադրման եւ ակելցուց, որ Թուրքիոյ հայերու կարգավիճակը յաճախ փոխուած է թե՛ թուրք ներքին քաղաքականութեան եւ թե՛ Թուրք-Սովետական յարաբերութիւններուն հիմամբ: Օրինակ, 1937-38ի հայերու եւ ալեւիներու կոտորածը Տերսիմի մէջ կը զուգահիշի Խորհրդային Հայաստանի եւ Վրաստանի սահմանամերձ շրջաններու արեւմտահայերու արքորին: Ըստ երեւոյթին, արեւմտահայոց դեմ սովետական քաղաքականութիւնը կ'ազդուէր Թուրք-Սովետական յարաբերութիւններէն:

Դոկտ. Խառատեան հանգամանօրէն ներկայացուց Թուրքիոյ հայ փոքրամասնութեան ենթարկուած ճնշումները, ինչպէս՝ ա) Գաւառահայութեան տեղաշարժի արգիլում, բ) Գաւառահայութեան նոր արքորներ՝ 1930-40ականներուն, գ) Երկրորդ Աշխարհամարտի առաջին տարին գործադրուած պարտադիր զինուորագրում, դ) Ծանր հարկատուութիւն, որ հայոց սնանկացումը կը

նպատակադրեր, ե) Պատմության դասագիրքերու մէջ հայոց դաւաճան, բացասական կարծրատիպի ստեղծում եւ հանրայնացում, գ) Հայկական մշակութային արժէքներու ծրագրաւորուած ոչնչացում, է) Հայերու ունեցուածքի վերասեփականում ոչ-հայերու կողմէ, ը) Թուրքիոյ ներքին հակամարտութիւններուն մէջ «հայկական մասնակցութեան յայտնաբերում» եւ պատժամիջոցներու գործադրում...:

Այս բոլորը յառաջացուցին հակահայ թշնամանքի ու աստիճանական մթնոլորտ, որուն հետեւանքով յատկապէս գաւառահայերը զօրացուցին իրեն ինքնութեան քօղարկումը՝ իրական կամ կեղծ կրօնափոխութեամբ եւ այլապէս: Անոնք առաւել լուսանցքայնացան, կղզիացան եւ ապրեցան այն ընկալումով որ միակ հայերն էին աշխարհի վրայ:

Դոկտ. Խառատեան մատնանշեց որ 1980ականներուն, Թուրքիոյ մէջ «ինքնութիւններու թոյլատրութեան» շրջանին, քօղարկուած հայերը չշտապեցին բացայայտել իրենց ինքնութիւնը, բայց մօտեցան ընկերվարական գաղափարախօսութեան: Անոնք ինքնութեան հարցը՝ քաղաքականութիւն, իսկ ընկերվարական գաղափարախօսութիւնը՝ ապաքաղաքականութիւն նկատեցին:

Եզրափակելով իր զեկոյցը, Դոկտ. Խառատեան հաւաստեց որ իսլամաց(ու)ած հայերու խնդիրը արծարծումը թափ առաւ 21րդ դարու սկիզբին, մանաւանդ Հրանդ Տինքի սպանութենէն ետք: Այսօր իսլամաց(ու)ած այս հայերէն խումբ մը կը միտի պահպանել իր հայութիւնն ու իսլամութիւնը: Ուրիշներ, սակայն, էթնիք եւ կրօնական դաւանափոխութեան հարցը վերստին օրակարգի նիւթ կը դարձնեն:

Այս նիստի ելոյթներուն համապարփակ քննարկումէն ետք, գիտաժողովը հասաւ իր աւարտին:

Պէտք է ըսել, թէ գիտաժողովը Լիբանանի մէջ Հայոց Ցեղասպանութեան նիւթի արծարծումը նոր հարթակի վրայ դրաւ: Արծարծուեցան նիւթեր, որոնք ցարդ հրապարակային նման քննարկումի չէին արժանացած, բացայայտուեցան մանրամասնութիւններ, եղան լուսաբանական բացատրութիւններ, մեկնաբանութիւններ, որոնք վստահ ենք՝ պիտի ծառայեն հանրութեան մէջ Հայոց Ցեղասպանութեան զանազան երեսակներուն մասին կարծիքներու, տեսակետերու վերամշակման, վերաթարմացման եւ պատշաճեցման՝ Հայոց Ցեղասպանութեան, հայ-թուրք յարաբերութեանց, Թուրքիոյ այլեւայլ փոքրամասնութիւններու մասին մեր ունեցած պատկերացումներուն, մտածումներուն եւ կեցուածքներուն առումով:

Գիտաժողովը յատկանշուեցաւ նաեւ միտքերու ազատ փոխանակումով, քննարկումներու խորութեամբ՝ փոխադարձ յարգանքի ենթահողին վրայ, ուր տինամիզմ մը շեշտուեցաւ Պոլիս-Երեւան-Պէյրութ կարծիքներու, մտածումներու եւ տեսակետերու դրսեւորման առումով: Գիտաժողովը հազուադէպ իրողութիւն էր նաեւ Հայկական Հարցը՝ Լիբանանի բեմէն լսելի դարձնելով՝ որոշ շերտաւորում ունեցող Իսթանպուլի ժողովրդավար, երեւանեան պետական եւ լիբանահայ պահպանողական տեսակետերու եւ մտածումներու համատեղման առումով եւս:

Վստահ ենք, որ այս գիտաժողովը՝ Հայոց Ցեղասպանութեան հարիւրամեակի լիբանահայ ձեռնարկներուն գիտական այս առջինեկը իր ոճական, բովանդակային եւ կշռութային բնորոշումը

պիտի դնէ զայիք ձեռնարկներուն վրայ:

**Չոյզ Գիրքերու Շնորհանդէս**

Գիտաժողովը իր լրումին հասաւ արաբերէն զոյգ գիրքերու շնորհանդէսով մը, Կիրակի, 1 Փետրուար 2015ի երեկոյեան ժամը 7:00ին, Հայկազեան Համալսարանի Մուկար Արուեստից Սրահին մէջ:

Արդարեւ, Հայկազեան Համալսարանի Հրատարակչատունը արաբ հանրութեան սեղանին կը դնէր Դոկտ. Նորա Արիսեանի Հարիւր Արաբ Վկայութիւն՝ Հայոց Ցեղասպանութեան Հարիւրամեակին Առթիւ գիրքը: Երկրորդ գիրքը Ղարաբաղի հակամարտութեան նուիրուած Թաթուլ Յակոբեանի *ՍԵՆ ԵՆ Կանաչն* էր, զոր թարգմանած էր Դոկտ. Նորա Արիսեան:

Շնորհանդէսին բացումը կատարեց Հայկազեան Համալսարանի Առեւտրական Վարչագիտութեան Բաժնի տեսուչ, Դոկտ. Ֆատի Ասրաուի, որ արաբերէնով ողջունեց ներկաները եւ անդրադարձաւ ձեռնարկի շարժառիթին ու նպատակին, համառօտակի ներկայացուց Դոկտ. Արիսեանը եւ լրագրող-փորձագետ Թաթուլ Յակոբեանը: Ապա ան խօսքը փոխանցեց Դոկտ. Արիսեանին:

Դոկտ. Արիսեան նախ արաբերէնով, ապա հայերէնով անդրադարձաւ Թաթուլ Յակոբեանի *Արցախեան Օրագիր, Կանաչ Ու Սեն, Ո՛չ Պատերազմ, Ո՛չ Խաղաղութիւն* գիրքին, յայտնելով, որ գիրքը կարդալով ինքնաբերաբար մղուած է զայն թարգմանելու: Եզրափակելով իր խօսքը, Դոկտ. Արիսեան շեշտեց. «Ան որ կ'ուզէ զաղափար առնել արցախեան հերոսամարտին մասին, պէտք է կարդայ Թաթուլ Յակոբեանի այս գիրքը»:

Շնորհանդէսի երկրորդ մասով Դոկտ. Ասրաուի կենսագրական հակիրճ տեղեկութիւններով ներկայացուց լիբանանեան խորհրդարանի անդամ երեսփոխան Ղասսան Մուխայպերը:

Երեսփոխան Մուխայպեր արաբերէնով արտասանած իր խօսքին մէջ ի միջի այլոց գիրքը նկատեց ցեղասպանութեան արհաւիրքը ապրած ու անկէ ճողոպրած վկաներու յիշողութիւն: «Ծագումով հայ չեմ, սակայն երկու հանգամանքներ զիս կը մղեն զօրակցելու Հայ Դատին: Նախ եւ առաջ՝ հայ ժողովուրդին դեմ պատահածը միայն հայ ժողովուրդին դեմ չէր, այլեւ՝ համայն մարդկութեան դեմ կատարուած ոճիր էր: Երկրորդ՝ դէպքէն հարիւր տարիներ ետք, տակաւին ցեղասպանութիւնը կը շարունակուի նաեւ այլ ժողովուրդներու նկատմամբ՝ Իրաքի, Պաղեստինի մէջ եւ այլուր: Առ այդ, պէտք է գրի առնել դէպքերու ականատեսներուն յիշողութիւնն ու վկայութիւնները: Ան որ կը մոռնայ իր անցեալը, ապագայ չունի»: Ան եզրափակեց իր խօսքը պնդելով, որ «նման ոճիր ո՛չ միայն հայերուն, այլեւ համայն մարդկութեան դեմ է ու՝ բոլորս հայ ենք»:

Աւարտին կատարուեցաւ զոյգ գիրքերու մակագրութիւն:

Հայկազեան Համալսարան

